

գեղարուեստագէտ բանաստեղծներ, որպիսիք են Պուշկին, Հայնէ, Իսահակեան եւայլն:

Դուրեանը գերծ չէ ի հարկէ եւ թերութիւնները: Զարմանալի էլ կը լինէր, որ մի քսանամեայ պատանի 70-ական թուականներին հանդիսանար ըստ ամենայնի մի կատարելատիպ, մանաւանդ իր հիւանդագին առողջութեան եւ տնտեսական սպանիչ պայմաններում...

Դուրեանի բանաստեղծութիւնների մէջ կան մի քանի անյաջող եւ թոյլ կտորներ, որոնց մէջ կը գտնէք աւելորդաբանութիւններ, կրկնութիւններ եւ անհարթութիւններ: Թող ոչ ոք չմոռանայ սակայն, որ Դուրեանը բախտ չունեցաւ իր «արցունքոտ տողերը» սրբագրելու անձամբ, դատելու սեւագրութիւնը մաքրագրութիւնից եւ կարեւորը ո՛չ կարեւորից: Այս հանգամանքը կարեւոր է շեշտել, որովհետեւ եթէ բանաստեղծը կենդանի լինէր, նա գտնում կը կատարէր ըստ իր ճաշակի եւ հասկացողութեան: Կարեւորն այն է, որ Դուրեանը գեղագէտ է եւ կոչումով բանաստեղծ:

Եւ իր բոլոր գրական արժանիքների համար քսանամեայ պատանին, հեծեծանքների ու տրտունջների այդ շիտակ երգիչը գնահատուել է ո՛չ թէ միայն հայ, այլ եւ օտար քրննադատների կողմից: Նրա գողտրիկ ոտանաւորները թարգմանուել են ռուսերէն, գերմաներէն, ֆրանսերէն, անգլիերէն եւ իտալերէն: Օտարները նրան համեմատել են Լէօպարդիի, Լամարտինի, Շելլիի, Հայնէի, Ալֆրէդ դը Միւսէի, իսկ մասնաւորապէս ես նրան համեմատում եմ ռուս վաղամեռիկ բանաստեղծ Նաբսոնի հետ:

Հինգ տասնեակ տարիներից աւելի է անցել Դուրեանի մահից: Ունեցել ենք տաղանդաւոր բանաստեղծներ, սակայն, Դուրեանը չի մոռացուել, որովհետեւ «տփույն մահու հրեշտակը», «ցուրտ ճառագայթը», «սեւ դադաղը», «տխուր կոչնակը», «մահերգակ ու խոժոռ գէմ» ունեցող մարդիկ անկարող եղան թաղելու Դուրեանի հոգին. որովհետեւ նա «անընշան» չէր, ուստի եւ նրա յիշատակը չի թառամել...



«ՍՅԱՓՈՒՄԻ ԵՐԳԵՐ»ԻՑ.

Շունչս շնչիդ քող լինի,
Մարեմի լոյսերն այս աղօտ,
Մոռնամի ազմուկն աշխարհի
Մինչեւ լոյս ու առաւօտ:

Քո պուրակում այս եղեմ,
Շուշաններիդ բուրմունքով
Այս իրիկուն քող արբեմ
Աստուածային հմայքով...

Թող մոռանա՛մ, մոռանա՛մ
Ե՛ւ ցաւ, ե՛ւ վիշտ եւ տանջանք

Ով լինելս էլ ուրանամ,
Դառնայ գիշերն խրախնամ:

Ձը մտածեմի շատ հեռու,
Դալիք օրեր չը հիւսեմի,
Ձը խոստանամ սիրելու,
Մէրն խոստումով չը պղծեմի...

Շունչս շնչիդ քող լինի,
Մարեմի լոյսերն այս աղօտ,
Մոռնամի ազմուկն աշխարհի
Մինչեւ լոյս ու առաւօտ:

ԱՐԱՄ ԳԱՌՕՆԷ